

## ՆՀԱՆՍԻՈՐ ԳԻՒՂԵՐ.

Լորանորում կան հետևեալ գիւղերը. Շնաթաղ, Լոր, Գետաթաղ, Դարաբաս, Նամբ և Լծէն. Սրանց բնակիչների մի յասը բնիկներ, իսկ մնացածը Պարսկաստանի գաղթականներ են. Բայց այս բոլոր գիւղերի սովորութիւնները, բացի Լծէնից, գրեթէ միակերպուել են, և միայն լեզուների մէջ փոքրինչ տարբերութիւններ են նկատում:

### ԾՆԱԹԱՂ.

Գտնուում է համանուն գետի աջ ափին; Փոքր հարթութեան վրայ, Տների առաջ կան փոքրիկ այգիներ, որոնք գիւղին գեղեցիկ տեսք են տալիս: Հին, անկանոն ձևով շինուած տների շարքում երևում են երկարկանի, պատըշգամար տներ. Գիւղի կենտրոնում գտնուում է քարաշէն, կամարակազ և բաւական գեղեցիկ եկեղեցին, որ շինուած է 1860 թ.:

Այս եկեղեցու մօտ կալ մի դադաղաձև գերեզմանաքար, որի վրայ, գեղեցիկ նախշերի մէջ բարձր քանդակուած է մի ձիաւոր, ձեռին բազէ, տռաջն էլ մի շուն և մի բազէ: Սրա մօտ մի մարդ՝ որ շղթալակապ բանած ունի մի տուիծ: Մի քիչ հեռու մի նկանակ: Բարձրում փորագրուած է:

Անուն Ա. և Ս. Ելիք Ղուկիս կանգնեցի  
զտապանս եղօր իմիշ պըն Պարիքին. զհայըն իմ  
զէլինախաղին, զմայըն իմ Թանգուլչիչին. Եղը.  
Փիրնամ:

Գիւղացիները մի այսպիսի մելիքի անուն չեին լիշտում: Գերեզմանաքարի վրայ գժբախտաբար թուական չկար, միայն սրանից մի քիչ հեռու կալ մի հին գերեզմանուան, ուր կան ՌՃ (1651) թուականի գերեզմանաքարեր: Սրանց հանդէպ,

ԴԱՐՄԱԿԻ վրայ կալ մի հին եկեղեցու աւերակ Ելորդուանց անունով:

Գիւղացիները լիշում էին Յովհաննէս եպիսկոպոս Շապանօղլի, Եահագիտան մականուանեալ Տաթևի վանտհօրը, որ ըստ Հ. Ալիշանի եղել է ծե. դարի վերջում \*):

Այժմեան ընտակիչները ընկի են համարւում: Ընդամենը 71 տուն, 332 արական, 343 իգական. բոլորն էլ լուսաւորչական հայեր: Խօսելիս վերջին խօսքը երկարացնում են: Սրտնք միւս գիւղացիների համեմատութեամբ քաղաքավարի և ունեսոր են: Ազուէսի մորթից մուշտակներ ալսաեղ էլ են երեան գալիս \*\*):

Գիւղի հողը արքունական է. և թէպէտ վարելահողը շատ քիչ է, բայց արօտատեղերը շատ ընդարձակ են, ուստի և ընտակիչները գլխաւորապէս պարապում են անասնապահութեամբ: Երկրագործութիւնն ու արգեգործութիւնը նոյնպէս բաւական արգիւնք են տալիս: Գիւղում երբէք կանոնաւոր գոյրոց չե եղել:

### Լ. Ո. Բ.

Դանւում է նոյն հովտի գրեթէ կենդրոնում, գետի ձախափին: Նրա արևելեան կողմից բարձրանում է Սըրբաներ գեռը, արևելահարաւից՝ Զրտկներ, արևելահիւսիսից՝ Եղիակը, իսկ արևմտեան կողմում՝ Հքւում է Խաղպիւր՝ լեռնաշղթան:

Տները ցըռուած են արգիների մէջ:

Գիւղի կենդրոնում գտնւում է ո. Գէորգ եկեղեցին, որ երկու գեղեցիկ սիւների վրայ բոլորող ուսմանական կամարներով և ձեղունով մի բաւական մեծ շէնք է, առանց գրմքէթի: Ունի միայն մի գուռն, գեղեցիկ նտիշերով եղրափակուած, որի վերև կալ հետեւալ արձանագրութիւնը.

Ի թվ. Ռաճմե. Ծնորհօք ամենակալին Այ շի-

\* ) Սիսական, եր. 220.

\*\*) Չեմ կարող ցիշել, որ խեղճ գիւղացիները լուլիսեան տօքին մուշտակները վրաներն առած էին գալիս ինձ տեսութեան, որպէսզի ցոլց տան ինձ:

նեցաւ ս. եկեղեցիս ի հալալ վաստակոց իւրոց  
ազուլեցի մահտեսի Պետրոսի որդի Խօջայ Պո-  
ղոսին եւ իւր որդոց Փրանգիւլին եւ միա հան-  
գուցեալ որդոյ Հատեփաննոսին եւ կրտսեր որ-  
դոյն Յարութիւնին. յիշեցէք ի Քս Ած:

Աւանդութիւնն ասում է, թէ Շահ-Աբասը Խլել է լի-  
չեալ Խոջալ Պօղոսի կնոջը և տարել իւր հարեմը: Մի քանի  
տարուց յետոյ կինը սաստիկ թախանձելով Շահ-Աբասին՝  
ազատում և վերադառնում է ամուսնու մօտ. սակայն սա  
չէ ընդունում նրան, ասելով թէ նա այժմ մեղաւոր է, քա-  
նի որ հաւատափոխ է եղել: Կինը կրկին վերադառնում է  
Շահ-Աբասի մօտ և նրանից մի մեծ գումար է ստանում,  
որպէսզի եկեղեցի կառուցանէ՝ մեղքից փրկուելու նպատա-  
կով: Եւ միայն այս գէպքում Խօջա Պօղոսը ընդունում է  
կնոջը և շինում Լորի, Խոտ-գիւղի և էլի մի ուրիշ եկեղեցի:  
Բացի այս եկեղեցուց՝ գիւղի արևմտեան կողմում գտըն-  
ում է ս. Սարգիս, իսկ հիւսիսալինում Դռնապան կոչուած  
մատուների աւերակները:

Գիւղից 270 մետր ( $1\frac{1}{4}$  Վ.) գէպի հիւսիս կալ «Սպիտակ խաչ»  
անունով մի խաչարձան, որ 2,5 մետր ( $3\frac{1}{2}$  արշ.) բարձրու-  
թիւն և 1,78 մ. ( $2\frac{1}{2}$  արշ.) լայնութիւն ունի և վերջերա-  
ներկած է կարմիր ներկով:

Քանդակուած գեղեցիկ խաչերի վերև փորագրուած է

Որոտ ծառայ Այ Գրիգոր եւ Լորիկ կան-  
գնեցաք զիսաշ հաւր իմ Հայրապետի մաւր իմ  
Մարթայի, յիշեցէք ի Քս. ի թվ. Զի.

Խաչարձանի մօտ և շրջակալիքը կան բաւական թուով  
գերեզմաններ, որոնցից մինի վրայ կալ հետևեալ տապանա-  
գիրը.

«Այս է հանգիստ գեղեցիկ ծին, ծաղկածին,  
ծաղկավթիթ Աննա-Խաթումին. փոխեցաւ ի Քս  
ԶիԶ. ամի. Մասիկ:»

Գիւղից գէպի արևմտահարաւ, մօտ 533 մետր (կէտ-  
վերստ) հեռաւորութեան վրայ, երեք բլրակների հատման

անկիւնում գտնվում է «Ծառու ս. Յոհանէս» ուխտատեղին։ Սա մի հասարակ մատուռ է, անսիւն, և կամարակապ ձեզունով։ Սրա հարաւալին կողմը կալ նոյն մեծութեան մի հասարակ գաւիթ։ Մատուռի միակ դռան վերև կալ մի բռլորվին եղծուած արձանագրութիւն, իսկ նոյն պատի մէջ կանգնեցրած խաչարձանի նոյն վէս անընթեռնելի արձանագրութեան մէջ նկատելի է «Թզվ. Պ.»։

Բնակիչները բոլորն էլ հայ լուսաւորչական են, մեծ մասամբ բնիկ, բացի մի քանի տուն խոյեցիներից։ Ընդամենը 43 տուն, 221 տրական, 216 իգական, Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ։

Գիւղը պատկանում է Օրբէլեաններին։ Միայն այս գիւղը նշանաւոր է իւր կը ըստ կենաց խնձորով։

Ֆողովուրդը մտաւորապէս բաւական յառաջացած է։ թէև ոչ մի ժամանակ կանօնաւոր ուսումնարան չէ ունեցել, սակայն տպամարդկանց թուի  $\frac{2}{3}$  մասը գրագէտ է։ Նրանց մէջ կայ մի համարտրանաւարտ, իսկ 10 հոգի աւարտել են միջնակարգ դպրոցներ նոյն իսկ գիւղի 2 քահանաներից մինը աւարտել է Գէորգեան ճեմարանի դպրոցական մասը։

#### Գ Ե Տ Ա Թ Ա Ղ.

Լորի և Դարաբասի մէջ, Շնաթաղ գետի ձախ ափին, ընկնում է Գետաթաղ գիւղը։ Նրա արևելեան կողմից բարձրանում է Եղիսակ գագաթը, իսկ արևմտեան կողմից Սառնը ծագերը։ Այս վերջինս արսում է կոչւում, որովհետեւ սարի գագաթին մի ժայռ քար կայ, որի ծակերի մէջ սառուցը (սառնը) մնում է և ամառ ժամանակ։

Գիւղում կայ մի գեղեցիկ, չորս սիւների վրայ հաստատուած, կամարակապ, առանց գմբէթի եկեղեցի։ Զեղունի մէջ և խորանների վերին մասում կան գաղտնի պահարաներ և պաշտպանութեան տեղեր։ Խորանների մօտ կան մի-մի հատ գեղեցիկ խաչարձաններ։ Եկեղեցին շինուած է

ՈՒԾԱ. թուին։ Միակ քահանան գրել շպիտէ և հազիւ հազ է կարդում։

Բնակիչները մեծ մասամբ Հին-Նախիջևանից գաղթականներ են. ընդամենը 39 ծուխ. 163 տր., 199 իգական, բոլորն էլ հայ լուսաւորչական։ Այս գիւղից Բաստամանց ընտանիքից Փիրզատէ անունով մի մտրդ 1586—7 թուին ճանապարհորդել է ամբողջ Մեծ և Փոյր Հայաստանը, ապա Փոքր Ասիա, Կ. Պօլիս, Լեհաստան, Միջին և Արևմտեան Եւրոպա, հաւանօրէն վաճառականութեան նոլատակով<sup>\*)</sup>։

Գիւղը պատկանում է մի շուշեցի թուրք բէկի. պարագանեւքը նոյնն է՝ ինչ որ վերը լիշուած գիւղերում։

Մտաւոր դրութիւնն էլ համապատասխան իրանց քահանալի մտաւորականին։ Դպրոց երբէք չեն ունեցել։

#### Դ. Ռ. Ա. Բ. Ա. Ա.

Գտնուում է նոյն գետի ձախ ափին։ Սրա արևմտահիւսիսալին կողմում ձգւում է Ելլիճա (քամոտ) լեռնաշղթան, որի միայն ծմակ (դէպի հիւսիս դարձած) լանջն է անտառապատ, մինչդեռ արեւահարեաց լանջը զուրկ է ծտուերից։ Արևմտեան կողմում բարձրանում է ծփակիր-տաշ մացառուտ սարը, իսկ արևելեան կողմում Մարահունջի նոյնպէս մերկ լեռը։ Իսկ հիւսիսից սրան պատում են Հանազուր բլրակները։ Գիւղը ընկած է մի փոքրիկ հարթակի վրա։ Մի նեղ ձորոկ քաժանում է գիւղը հայկական և թրքական թաղերի, երկուսն էլ այգիներով պատաժ։ Հայկական մտաւում գտնուում է ս. Ստեփանոս, իսկ թրքականում ո. Աստուածածին եկեղեցիները։

Ս. Ստեփանոս եկեղեցին, ուր ալժմ էլ կատարւում է ժամասցութիւն՝ մի շատ հասարակ, առանց գմբէթի շէնք է։ Շուրջը կան միաբանների խցերի և պարսպի հետքեր։ Խորանների մօտ կան մի-մի խաչարձան, որոնցից մինի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը։

<sup>\*)</sup> Ախական, եր. 220.

Թվ. 21. Նս Գրիգոր կանգնեցի զիաշս...

Ա. Աստուածածին եկեղեցին կարմիր, սրբատաշ քարերով շինուած մի փոքրիկ շենք է, որի ձեղունը ալժմ բոլորվին քանդուած է. ներսը, հիւսիսային պատի վրայ, կար հետևեալ արձանագրութիւնը, որի մի քարը ընկած և կորած լինելով չէ կարելի ամբողջովին ընդօրինակել:

Ցուսով ամենակալին Այ... ուղի մեծին Հիպարտի եռ եւ ամուսին իմն... կողմնակալ այսմ նահանգի զոր ետ մեզ... շինեցաք զԱստուածածինս ի հալալ... տվաք ի պէտս սպասաւրաց զսնեկատս (?)... . . . ակին հողն եւ զներքին ծաղկոցն ի Ծններ զՃաթեւ... կատարեն ամեն. Ժ: Ե: Յայսուովմեան Ե. զատկին... զՃարսահճիս. Ե. Մինախաթունին. Եթէ ոք ի մերոց կամ յաւուրաց խափանեացէ զսահմանեալս մերոց ՅԺԸ. Հայրապետաց նզովեալ լիցի. զյուտայի եւ զկայէնի անէծսն առցէ: Ի թվ. ԶիԱ.

Սրանից ներքե փորագրուած է:

Ծնորհոյն Այ նորոգեցի զԱծածինս Ո-ՃիԶ.

Թվին վերակացութեամբ Տէր-Մարտիրոսին եւ Տէր Գէորգին Տէր Նփրեմին:

Այս մատրան հիւսիսային կողմը կու մի տապանաքար, հետևեալ տապանագրով.

Այս է հանգիստ Գե... մանկան պրն Սմբատին իշեցէք ի Քս. Թվ. ԶԽԾ.

Եկեղեցուց փոքր ինչ բարձր կայ մի գերեզմանատուն, ուր կան նոյն թուականով տապանագրեր. օր. մի խաչարձանի տակ գրուած է.

Ես թագվոր Խէրան Սոլիթան կանգնեցի խաշս փրկութիւն հոգուն մերում. Թվին ԶԽԾ.:

Մի հին քարեալ կամուրջ ձգւում է գետի վրայ, որ ունի մի եղծուած արձանագրութիւն. Աւանդաբար այս կամուրջը Արգումանի կամուրջ է կոչւում:

Ալժմեան գիւղի տները բոլորն էլ, բացի մինից, կիսա-

գետնափոր են, ալգիների մէջ ցրուած։ Հայկական մասը համեմատաբար մաքուր է։

Բնակիչները հայեր և թուրքեր են. ընդամենը 152 տուն. 521 տրական և 365 իգական, 886 հոգի ի միասին, որոնցից հայեր են 42 տուն. 200 ար. 133 իգակ. իսկ թուրքեր՝ 110 տուն. 321 ար. 232 իգ.։

Հայերը և թուրքերը միմեանց հետ հաշտ են ապրում. կրօնական տաելութիւն, կրօնական զգացմունքից ծագած կոխներ չեն պատահում։ Մինչև անգամ հայ քահանան ահազդին ազգեցութիւն և հեղինակութիւն ունի թուրքերի մէջ։ Իմ այս գիւղում եղած միջոցին թուրքերը մի աղջիկ էին փախցրել նոյն գիւղից, որի պատճառով և կռիւ էր ծագել։ Երեկոյին պատուաւոր թուրքերը եկան հայ քահանալի մօտ և նրան թափանձելով տարան աղջիկ փախցնողի տունը, ուր նա հաշտեցրեց երկու կողմերը, տալգանք գնելով փախցնողի վրայ, Բոլոր հայերը գիտեն թուրքերէն, մինչդեռ թուրքերից մի քանիսը միայն կարողանում են խօսել հայերէն։ Պարապմունքը սովորականն է։ Դիւղը երբէք դպրոց չէ ունեցել։ Հայերից միայն 7 հոգի գրագէտ կան, իսկ թուրքերից՝ 5։

Առաջ գարաբասցիների ձմեռանոցն էր Շամբը, Որուանալ գետի եղրին, որ իւր անունն ստացել է տեղի ճահճալին և շամբոտ լինելուց։ Ալժմ ալիտեղ 24 տուն մշտական բնակիչներ հաստատուելով գիւղ են գարձրել։

Դարաբասցիները միւս գիւղերի համեմատութեամբ աւելի կոպիտ են։ Տեղական առասպելն ասում է, թէ մի անգամ Մովսէս մարգարէն գնում էր Աստծու մօտ, արջը խնդրեց նրանից, որ Աստծուն խնդրէ իրեն մարդ գարձնել։ Վերագարձին Մովսէս մարգարէն յայտնեց արջին, թէ խընդիրը լարգուած է, միայն դարաբասցի պիտի գառնար։

—Դէհ որ գարաբասցի պիտի գառնամ, պատասխանում է արջը, էլ ինչի եմ մարդ գառնում։

## Լ Ծ Ե Ն.

Լորանորի վերջին գիւղն է և տեղաւորուած է Եինաթաղ  
ու Որսոն գետերի միախառնման մօտ, մի հարթակի վրայ:  
Առջեկց ձգւում է Խիւթուզի լեռնաշղթան, Աւելի հեռուն,  
դէպի հիւսիս բարձրանում է Խշոր լեռ, իսկ արևմտեան  
կողմում ձգւում է Եիշթափա լեռնաշղթան մինչև Սուարանց  
գիւղը:

Տները կիսագետնափոր, կաւից շինուած զարադամներ  
են: Ունի մի հնաւեր եկեղեցի, բայց առանց քահանալի:  
Գրւդի արևմտեան կողմում, Եիշթափա լեռան լանջին, կու-  
մի աւերակ մատուռ, որը տեղացիները անապատ» են կո-  
չում: Սա մի փոքրիկ, հասարակ շէնք է, որի գուան խա-  
չարձանի վրայ գրուած է թվ. 21.2. (1847): «Հանաւորն  
այն է, որ մատուռի երկու պատերի միջից միմի սոսի ծառ  
բարձրանալով կամար են կապել և միացել միմեանց, բա-  
րե տուեր: Մառը պաշտուում է և ծածկուած է հանգերձ-  
ների բազմաթիւ կտորներով:

Գիւղը պատկանում է Տաթևի վանքին: Բնակիչները  
խոյեցիներ են, որ 1828 թ. գաղթել են ալստեղ, բոլորն էլ  
հայ լուսաւորչականներ. ընդամենը 32 տուն. 149 ար.  
165 իգ., պարապում են երկարօրծութեամբ, անասնապա-  
հութեամբ և այլեզօրծութեամբ: Դպրոց չունին: Թէ սո-  
վորութիւններով և թէ լեզուով տարբերուում են Լորանորի  
միւս գիւղերից:

Լ.ծէնից դէպի արևմտահիւսիս, Մեշեռու և Տուղիւրտ  
լեռների մէջ, գտնուում են Բահրլու և Խրիմիս թրքարնակ  
գիւղերը: Առաջինը ունի 22 ծուխ, 64 ար. և 64 իգ. բնա-  
կիչ, իսկ Խրիմիս՝ 35 ծուխ, 125 ար. և 105 իգական:

## Ե Ա Ւ Ճ Ի.

Լորանորի և Տաթևի սահմանների մէջ ընկնօւմ է Եաի-  
ճի գիւղը, որ ըստ Հայր Ալիշանի նախկին Հարժիք գիւղը  
պիտի լինի: Սա գտնուում է Բազար-չալի ձախ ափին, հովտի  
լանջին. Հիւսիսային կողմից պատած է բարձր ժայռերով,

որոնց մէջ կան մի մեծ և մի քանի փոքր քարայրեր։ Արեմտեան կողմում էլ գետի աջ ափին բարձրանում է մի ահագին ժայռ, որի գագաթին հնումը եղել է մի ամրոց, որի հետքերն են մնում այժմ։ Գիւղի կենդրոնում գտնուում է մի հին, բաւական գեղեցիկ եկեղեցի ո. Մինաս անունով՝ Եկեղեցու գաւթում կան բաւական թուղթ հին գերեզմաններ։ Բնակիչները բնիկ հայեր են, ընդամենը 58 ծուխ. 221 ար. և 198 իգ.։ Պարապում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ։ Ալգիններ չունին։

Եակիճի գիւղից գէպի արևելահիւսիս, Քիւրտար գիւղի արևմտեան կողմը, Որոտնալ գետի ձախ ափին, գտնուում է մի աւերակ եկեղեցի, մասամբ սրբատաշ, մասամբ հասարակ քարերից շինուած։ Եկեղեցու գաւթի գուռը երկիւմար է և բաւական գեղեցիկ։ Գաւթի մէջ կայ մի գերեզման, որի տապանաքարը դադաղաձեռ է, 1,83 մ. (և արշ. 10 վ.) երկարութեամբ, 1,07 մ. ( $1\frac{1}{2}$  արշ.) բարձրութեամբ, 0,42 մ. (10 վ.) լայնութեամբ։ Տապանաքարի մէջ տեղը մի ձիաւոր է քանդակուած, որի շուրջը գրուած է.

Զգնդնցկատիպ նև զգաղկավիթիթ քաջ զաւրական ազանաածին դեռարյս մանկիկն Ըլան կին.... \*) վոխնալ յաշխաւնէ թողեալ սուզ անմինիթար անզաւակ ծնողացն Զաղարին նև Բարախաթունին։ Ցիշեցէք ՚ի Քս. Թվ. ԶՀ.

Գաւթի գուռն մօտ մի խաչ կայ, վրան ՆՂԲ. թ. (1043) գրած, իւկ կամարի վրայ կարգացւում է.

Յանում Այ ու արքաուն Սմակատայ ու Տարսաիին իշխանութեամբ... վերապատրօնութեամբ ես կոտուլ (?) միաբանեցայ։

Փոքր ինչ ներքեւ մեծ տառերով.

Հիշնա Քս. Ած. զՄամիկոյ թագոհի նև ողորմեան Եկեղեցին պարսպապատ է, որի շուրջը կան բաւական թուղթ հին գերեզմաններ։ Կան նաև աների աւերակներ։

\*) Ինձ ուղեկցող Եակիճի գիւղի քահանան ասում էր, թէ արդ եղծուած տեղում ինքը մի քանի տարի առաջ կարգացնէ և ոնցանիկու.